ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Դաստիարակների մասնախմբի նիստ

Նիստը կայացել է 2025-2026 ուսումնական տարվա հունիսի 26–ին:
Նիստին ներկա էին մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում

1. Մասնախմբի նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ Մ.Հարությունյան):
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկուցում (զեկուցող՝ Մ.Հարությունյան):
3. Մասնախմբի անդամների տարեկան աշխատանքների ամփոփում և մասնախմբի համակարգողի տարեկան հաշվետվության նախագծի ներկայացումը (զեկուցող՝ Մ. Հարությունյան):
4. Այլ հարցեր

Լսեցին՝

1. Մասնախմբի աշխատանքների համակարգող Մ. Հարությունյանը ներկայացրեց հունիսի 26-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Մասնախմբի ղեկավարը զեկուցեց նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման վերաբերյալ՝ նշելով, որ դաստիարակներն ակտիվորեն ներգրավվել են սովորողների ԱՈՒՊ-ների տարեկան ամփոփման գործընթացում՝ ներկայացնելով դիտարկումներ սովորողների առաջընթացի, արձանագրված ձեռքբերումների և առկա դժվարությունների վերաբերյալ: Նշվեց նաև, որ դաստիարակները մասնակցել են իրենց համար կազմակերպված մասնագիտական վերապատրաստման դասընթացին: Միաժամանակ դասասենյակներում իրականացվել է առկա ուսումնական նյութերի, դիդակտիկ պարագաների և նյութատեխնիկական ռեսուրսների հաշվառում և ուսումնասիրություն՝ առանձնացնելով վերանորոգման կամ փոխարինման կարիք ունեցող գույքային միավորները: Բացի այդ մասնախմբի բոլոր անդամները սահմանված ժամկետում կազմել են իրենց տարեկան հաշվետվությունները՝ համաձայն նոր ձևաչափի պահանջների:

Լսեցին՝

3. Մասնախմբի անդամները ներկայացրին իրենց կողմից ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները՝ անդրադառնալով արձանագրված հաջողություններին, առկա դժվարություններին, ինչպես նաև ներկայացնելով առաջարկություններ հաջորդ տարվա աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: Նշվեց, որ բոլոր հաշվետվությունները կազմվել են նոր ձևաչափով և պատրաստ են ներկայացման մանկավարժական խորհրդի նիստում: Մասնախմբի համակարգողը ներկայացրեց մասնախմբի տարեկան գործունեության ընդհանուր հաշվետվության նախագիծը՝ ընդգծելով, որ նախատեսված բոլոր աշխատանքները հիմնականում իրականացվել են ըստ տարեկան պլանի: Միաժամանակ նշվեց, որ իրականացվել են նաև լրացուցիչ աշխատանքներ, որոնք նախապես պլանավորված չեն

եղել, սակայն դրանք որևէ խոչընդոտ չեն առաջացրել գործընթացի համար, և առկա ռեսուրսները բավարար են եղել դրանց պատշաճ իրականացման համար:

Լսեցին՝

4. Մ. Հարությունյանը մասնախմբին տեղեկացրեց նոր ուսումնական տարում սպասվող որոշ փոփոխությունների մասին՝ նշելով, որ օրենսդրական կարգավորումների փոփոխությունների արդյունքում բարձրագույն կրթություն չունեցող դաստիարակները այլևս չեն կարող ստանձնել դասղեկի պարտականություններ: Միաժամանակ բարձր գնահատվեց դասղեկի պարտականությունները կատարած դաստիարակների՝ Հ. Մովսեսյանի, Ս. Դունամալյանի, Հ. Խաչատրյանի և Ա. Կարապետյանի աշխատանքը՝ ընդգծելով նրանց պատասխանատվությունն ու արդյունավետ գործունեությունը:

Որոշեցին

1. Հաստատել մասնախմբի 2026թ. հունիսի 26-ի նիստի օրակարգը:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ դաստիարակները ներգրավված են եղել ԱՈՒՊ-ների ամփոփման գործընթացում, մասնակցել են վերապատրաստմանը և իրականացրել են դասասենյակների գույքի հաշվառում:
3. Մասնախմբի անդամների տարեկան հաշվետվությունները ներկայացնել մանկավարժական խորհրդի առաջիկա նիստում՝ ապահովելով դրանց քննարկումն ու ամփոփ ներկայացումը:
4. Հանձնարարել մասնախմբի ղեկավարին և համակարգողին վերջնական տեսքի բերել մասնախմբի ընդհանուր տարեկան հաշվետվությունը և պատրաստել այն մանկավարժական խորհրդի նիստում ներկայացման համար:
5. Դասղեկի գործառույթների իրականացման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝ Մ. Հարությունյան

Քարտուղար՝ Ռ. Բադալյան

29.06.2026